ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ԼՍՈՂՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ
ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

Министерство образования, науки, культуры и спорта Республики Армения Ереванский специальный образовательный комплекс для детей с нарушением слуха

Republic of Armenia The Ministry of Education, Science, Culture and Sport Yerevan special educational complex for children with hearing disorders

իմ և Նորքի այգիներ193, հեռ.65-10-50,65-10-60
էլ. փոստ lxue.dproc@mail.ru

Ելք «110-01»
«13» «03» 2022թ.

«ՂԱՀՐԱՄԱՆ» ՍՊԸ-ի տնօրեն՝
պարոն Մ. Հասանյանին

Հասցեն՝ Արարատի մարզ,գ.Մարմարաշեն 13-13
էլ. փոստի հասցեն՝ mhasanyan@mail.ru

ԾԱՆՈՒՑՈՒՄ
13.01.2022թ կնքված թիվ «ԼԽՈՒԵ-ԳՀԱՊՁԲ-2022/1» N4 ծածկագրով պայմանգիրը միակողմանի լուծելու մասին

«ԵՐԵՎԱՆԻ ԼՍՈՂՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ԳՆՈՐԴ) և «ՂԱՀՐԱՄԱՆ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ ՎԱՃԱՌՈՂ) միջև 13.01.2022թ. կնքված թիվ «ԼԽՈՒԵ-ԳՀԱՊՁԲ-2022/1» N4 ծածկագրով պայմանգրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն ՎԱՃԱՌՈՂԸ պարտավորվում է պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինել Գնորդի համար ընդունելի ժամկետում :

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 1/մեկ/ օրից ավելի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ՝ պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վաճառողի կողմից մինչ օրս չի իրականացվել Պայմանագրով ստանձնած պարտավորությունները Վաճառողը ղեկավարվելով վերոնշյալ իրական հիմքերով միակողմանի (ամբողջությամբ) լուծում է Պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ընդ որում, եթե՝

- սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է պայմանագրի և որակավորման ապահովման գումարը (Նշված գումարը անհրաժեշտ է վճարել Գնորդի գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնի բնօրինակները ներկայացնել Գնորդին), ապա Գնորդը տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.

- մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից պայմանագրի և որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա Գնորդը դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

«ԵՐԵՎԱՆԻ ԼՍՈՂՈՒԹՅԱՆ
ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ
ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ
ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ՝ Լ. ԲԱԲԱՅԱՆ